ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ /1885-1914 թթ../, Ե.,«Եգեա» հրատարակչություն, 2003, 202 էջ:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի մի խումբ գիտաշխատողների կոլեկտիվ ուսումնասիրության արդյունքն է 1885-1914 թթ. Հայաստանում և Անդրկովկասի հայաբնակ վայրերում գործած թվով 8 ազգային ու սոցիալիստական կուսակցությունների ստեղծման և գործունեության պատմությանը նվիրված գիտական հոդվածների գրախոսվող ժողովածուն: Այն կազմված է աղբյուրագիտական հարուստ հենքի վրա: Հեղինակներն օգտագործել են ինչպես Հայաստանի, այնպես էլ Ռուսաստանի և Վրաստանի ազգային արխիվներում հայտնաբերված նյութերը, ժամանակի կուսակցական մամուլը, քաղաքական կազմակերպությունների հիմնադիրների և մասնակիցների հուշերը, հետագայում լույս տեսած պատմագիտական ուսումնասիրությունները: Այս ժողովածուի նորույթն այն է, որ նրա հեղինակները վերակառուցման և բացախոսության արդի պայմաններում և ամենավերջին ժամանակաշրջանում հրապարակված նոր գրականության և արխիվային վավերագրերի հիման վրա լուսաբանել են այդ կուսակցությունների փոխկապակցված և համակարգված պատմությունը:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, *Արմենական կուսակցության կազմավորումն ու գործունեությունը*, էջ 3-27:

Այս կուսակցության ծնունդը Վան-Վասպուրականում 1885 թ. պատահական չէր: Վան քաղաքը և համանուն նահանգը հայտնի էին իրենց լուսավորական օջախներով: Այստեղ են գործել ժամանակի նշանավոր գործիչներ Մկրտիչ Խրիմյանը, Գարեգին Սրվանձտյանցը, Մկրտիչ Փորթուգալյանը և շատ ուրիշներ, որոնք կրթեցին ու դաստիարակեցին հայրենասերների մի ամբողջ սերունդ:

1885 թ. Մկրտիչ Թերլեմեզյանը /Ավետիսյան/, Ռ. Շատվորյանը, Գր. Պեոզիկյանը, Գր. Աճեմյանը, Ղ. Խանջյանը, Գ. Բաղեշցյանը և ուրիշներ, Վանում հիմնում են Արմենական կուսակցությունը: Արմենականներն իրենց գործունեությունը տարածում են ոչ միայն Վան-Վասպուրականում, այլև մասնաճյուղեր են ստեղծում Սալմաստում, Խոյում, Ուրմիայում, Մուշում, Բիթլիսում, Տրապիզոնում և այլուր /էջ 7-8/: Առավել մարտունակ ու կազմակերպված մասնաճյուղերը Վանում և Շատախում էին: Այս երկու հատվածներում իրենց գործունեությունն են ծավալում 90-ից ավելի խմբեր: Կուսակցության մեջ են մտնում նաև կանայք: Արմենականներն իրենց առաջնային խնդիր էին համարում հայության ինքնապաշտպանության կազմակերպումը: Գիտակցելով, թե որքան դժվար է լինելու Երկիր զենքի և զինամթերքի ներկրումը, նրանք փորձում են կազմակերպել դրանց արտադրությունը տեղում:

Արմենական կուսակցության համար լուրջ փորձություն էր 1896 թ. հունիսի 3-ին սկսված Վանի հայության ինքնապաշտպանությունը: Մ. Թերլեմեզյանը կարողանում է համախմբել մյուս կուսակցություններին և գործել միակամ և համերաշխ: Վանեցիների դիմադրությունը օսմանյան իշխանություններին հարկադրում է քաղաքի բրիտանական հյուպատոսի միջնորդությամբ դադարեցնել ինքնապաշտպանությունը և հնարավորություն տալ հայ մարտիկներին «անարգել» հեռանալ երկրից:

Հավատալով իշխանությունների սին խոստումներին՝ դիմադրության ղեկավարները որոշում են միացյալ ուժերով հեռանալ Պարսկաստան: Սակայն 1896 թ. հուլիսի 9-ին արմենականները վճռում են առանձնանալ հիմնական խմբից: Խանասորի դաշտում տեղի է ունենում ընդհարում՝ թշնամու գերազանց ուժերի հետ: Մարտի ընթացքում հայերը տալիս են 384 զոհ /էջ 21/: Ողջ մնացած ղեկավարներից Ա. Եկարյանը, Գր. Պեռզիկյանը, Ղ. Խանջյանը և ուրիշներ, Եղիշե Գոնտակճյանի գլխավորությամբ, սկսում են քայլ առ քայլ վերականգնել կուսակցության գործունեությունը: Նրանց, սակայն, չի հաջողվում ամբողջությամբ իրականացնել իրենց մտադրությունը: Ճգնաժամի մեջ գտնվող Արմենական կուսակցությունն ի վերջո, մերձենում է վերակազմյալ հնչակյաններին: Դրա հետևանքով ձևավորվում է նոր՝ Հայ սահմանադրական-ռամկավար կուսակցությունը:

ԳԵՂԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, *Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն,* էջ 26-55:

1887 թ. Ժնևում արևելահայ մի խումբ ուսանողներ՝ Ա. Նազարբեկյանը /Նազարբեկ/, Մ. Վարդանյանը, Ռ. Խանազատը և ուրիշները հիմնադրում են Հնչակյան կուսակցությունը: Նրանք լույս են ընծայում «Հնչակ» թերթը: 1888 թ. հնչակյանները հրատարակում են իրենց ծրագիրը: Այն կրել է ռուս նարոդնիկների և մարքսիստների ազդեցությունը: Հնչակյանները 1880-ական թվականների վերջին և 1890-ական թվականների առաջին կեսին ակտիվ գործունեություն են ծավալում Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում: Նրանց անմիջական ղեկավարությամբ ու մասնակցությամբ 1890 թ. հուլիսի 12-ին Կ. Պոլսում տեղի է ունենում Գում գաբուի նշանավոր ցույցը: Այն մեծ ազդեցություն է ունենում հայ երիտասարդների վրա: Կովկասում գտնվող Ռ. Խանազատին առաջարկություն է արվում Հնչակյան կուսակցությանը միավորել նոր ստեղծվող ՀՀԴ-ի հետ: Համաձայնությունը, սակայն, չի կայանում:

1892 թ. հնչակյան կենտրոնը Ժնևից տեղափոխվում է Աթենք: Կուսակցությունը բուռն գործունեություն է ծավալում հատկապես Փոքր Հայքում: Այստեղ նրանք կազմակերպում և ղեկավարում են մի քանի զինված խմբեր: Հնչակյանները գործուն մասնակցում են 1894 թ. Սասունի ապստամբությանը, 1895 թ. Զեյթունի և 1896 թ. Վանի ինքնապաշտպանություններին: 1895-1896 թթ. արևմտահայության զանգվածային կոտորածները ծանր հարված են հասցնում հնչակյաններին: Կուսակցության ներսում առաջացել էին տարաձայնություններ, որոնց լուծմանն էր նվիրված 1896 թ. հունվարին Լոնդոնում գումարված Հնչակյան կուսակցության պատգամավորական ժողովը: Ավ. Նազարբեկյանն ու իր

համակիրները հրաժարվում են մասնակցել: 14 պատգամավորներ՝ Մ. Տամատյան, Ա. Արփիարյան և ուրիշներ, պահանջում են ծրագրից հանել սոցիալիզմի դրույթը և հրաժարվում են զբաղվել սոցիալական ու տնտեսական հարցերով /էջ 71/: Կողմերը չկարողացան համաձայնության գալ, և կուսակցությունը երկփեղկվեց: Առաջ եկան վերակազմյալ հնչակյաններ ու հին հնչակյաններ:

Հնչակյան կուսակցությունը հայ հասարակական և քաղաքական այլ ուժերի հետ գործուն մասնակցում է հայ Առաքելական եկեղեցու գույքի բռնագրավման դեմ իրականացվող համաժողովրդական պայքարին: 1903թ. նոյեմբերին հնչակյանները Թիֆլիսում մահափորձ են կազմակերպում Կովկասի կառավարչապետ Գոլիցինի դեմ: Վերջինս ծանր վիրավորվում է: 1905-1906թթ. հայ-թաթարական (ադրբեջանական) ընդհարումների ժամանակ հնչակյան ինքնապաշտպանական խմբերը Փարամազի, Քեոսե Սարգսի և Վահագնի գլխավորությամբ ելուզակներին դիմագրավում են Երևանում, Զանգեզուրում, Ագուլիսում և այլ վայրերում:

Հնչակյան կուսակցությունը ողջունում է 1908թ. ապրիլին Օսմանյան Թուրքիայում երիտթուրքերի կատարած հեղաշրջումը: Նրանք հրաժարվում են □Թուրքիայից Հայաստանի /Արևմտյան - Ռ. Ս./ անջատման պահանջից, քանի որ երկրում տապալվել է բռնապետական վարչակարգը և երկրում հաստատվել են սահմանադրական կարգեր□ /էջ 50/: Այնուամենայնիվ, հնչակյանները երիտթուրքերի նկատմամբ զգույշ դիրքորոշում ունեին: Իսկ Ադանայի 1909թ. կոտորածներից հետո նրանք այլևս չէին հավատում երիտթուրքերին: 1909թ. հուլիսի 12-ին Կ. Պոլսում տեղի ունեցած հնչակյան 6-րդ պատգամավորական ժողովը մերժեց օսմանցիության գաղափարը: Ժողովի որոշման համաձայն, կուսակցությունը կրում է □սոցիալ-դեմոկրատ□ անվանումը: Սկսված Առաջին համաշխարհային պատերազմը հնչակյան կուսակցության համար օրակարգի խնդիր դարձրեց հայության ինքնապաշտպանության կազմակերպումը:

ԳԵՂԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, *Վերակազմյալ Հնչակյան կուսակցություն, էջ 56-75:*

Ինչպես նշվեց, 1890-ական թվականների ջարդերից հետո Հնչակյան կուսակցությունը պառակտվում է: 1898 թ. Ալեքսանդրիայում հրավիրված համագումարում ընդդիմադիրներն իրենց կոչում են Վերակազմյալ հնչակյաններ: Նրանց ակնառու ներկայացուցիչներ Ա. Արփիարյանը, Մ. Տամատյանը և ուրիշներ ձգտում էին միավորվել ՀՀԴ-ի հետ: Սակայն, վերջիններիս ներկայացրած մի շարք պահանջներն անընդունելի էին վերակազմյալների համար, ուստի միավորումը չի կայանում /էջ 60-61/:

Հնչակյան կուսակցության երկու հատվածների վերմիավորումը տեղի ունեցավ 1902թ. մարտին Լոնդոնում, որը երկար չտևեց: Ինչպես նշում է հեղինակը, «կատարվածի մեջ մեղքի իրենց բաժինն ունեին վերակազմյալները...: Սակայն, ակնհայտ է, որ հնչակյան միության գլխավոր պառակտիչները դարձան հին հնչակյանները, որոնք նույնիսկ միության հռչակումից հետո էլ չհրաժարվեցին սոցալիզմի քարոզչությունից...» /էջ 70-71/: Իր հերթին, պառակտում է տեղի ունենում վերակազմյալ հնչակյանների ներսում: Պատճառը՝ հայ մեծահարուստներից բռնի դրամահավաքն էր:

ԳԵՎՈՐԳ ԽՈՒԴԻՆՅԱՆ, *Հայ Յեղափոխական Դաշնակցություն*, էջ 76-109:

Հայ ազգային-ազատագրական շարժման պատմության մեջ իր ուրույն տեղն ունի Հայ հեղափոխական դաշնակցությունը: 1890 թ. ամռանը Թիֆլիսում հիմնվում է Հայ հեղափոխականների դաշնակցություն քաղաքական կազմակերպությունը, որը նպատակ ուներ համախմբել արևմտահայության ազատագրության համար պայքարող բոլոր ուժերին: Հիմնադիր ժողովը որոշում է ունենալ «Դրոշակ» տպագիր օրգանը, որի առաջին համարում հրապարակվում է ՀՅԴ «Մանիֆեստը»: Մոտ մեկ տարվա ընթացքում ՀՅԴ-ն հիմնում է իր մասնաճյուղերը Անդրկովկասում, Ռուսական կայսրության հայաշատ վայրերում, ապա՝ Պարսկաստանում, Տրապիզոնում, Կ. Պոլսում: Կուսակցության մեջ մտան նաև այլ կազմակերպություններ և խմբեր:

Ինչպես արմենական և հնչակյան կուսակցությունները, այնպես էլ դաշնակցությունը չխուսափեց ներկուսակցական տարաձայնություններից: Պատճառն այն էր, որ ՀՅԴ-ին էին անդամակցել սոցիալական և քաղաքական տարբեր ծագում և հայացքներ ունեցողներ: Այս և այլ հիմնահարցերի լուծմանն էր նվիրված 1892 թ. հունիսին Թիֆլիսում կայացած ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովը: Նրանում ընդունվեց կուսակցության ծրագիրը: Այն 1894 թ. «Մեր ծրագիրը» անվամբ տպագրվեց «Դրոշակում»: Այս ժողովից հետո կուսակցությունը սկսեց կոչվել Հայ հեղափոխական դաշնակցություն: Դաշնակցության հետագա քայլերն ուղված էին իր որդեգրած ծրագիրն իրականացնելուն: Միջոցներ են ձեռնարկվում զենք և զինամթերք հայթայթելու և դրանք Երկիր տեղափոխելու համար: Հիմնվում է «Խարիսխ» զինագործարանը: Պարսկա-թուրքական սահմանին գտնվող Դերիկ վանքը դառնում է դաշնակցական զինատար և հայդուկային խմբերի հենակետը: Ցավոք, չնայած ձեռնարկված ջանքերին, 1894-1895 թթ. ընթացքում դաշնակ-ցությանը չի հաջողվում Արևմտյան Հայաստան ուղարկել անհրաժեշտ քանակությամբ զենք և զինամթերք /էջ 89/:

Սուլթան Աբդուլ Համիդ II-ի կազմակերպած ջարդերից հետո կուսակցության մի շարք անդամներ առաջարկում են վերանայել ՀՅԴ մարտավարությունը: Նրանք՝ Հրայրը /Արմենակ Ղազարյան/, Վազգենը /Տիգրան Տերոյան/, Գուրգենը /Բաղդասար Մալյան/ գտնում էին, որ անհրաժեշտ է խուսափել տեղական բնույթի կռիվներից և ուժերը համախմբել Երկրի մի շարք վայրերում:

ՀՅԴ-ն ակտիվ մասնակցում է 1903 թ. հունիսի 12-ին ցարական իշխանությունների կողմից հայ Առաքելական եկեղեցու ունեցվածքի բռնագրավման դեմ ուղղված պայքարին: Այդ նպատակով հիմնվում է «Հայկական ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե»: Վերջինիս կողմից Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանն ի պատասխան ցարի հրամանագրի, հրապարակում է մերժման կոնդակ: Փաստորեն, ՀՅԴ-ն, որ հիմնվել էր Արևմտյան

Հայաստանի ազատագրման համար, նոր պայմաններում ակտիվ մասնակցում է Անդրկովկասում ծավալվող հակացարական պայքարին:

Ռուսաստանյան առաջին հեղափոխության տարիներին ցարիզմի հրահրած հայ-թաթարական ընդհանումների ժամանակ ՀՀԴ-ն ղեկավարեց արևելահայերի ինքնապաշտպանությունը: Դրա համար կուսակցությունը տրամադրեց իր մարտական ներուժը և նյութական միջոցները: Արևելյան Հայաստանում և Անդրկովկասի հայաբնակ վայրերում դիմադրությունը գլխավորում են դաշնակցության նշանավոր դեմքեր Նիկոլ Դումանը /Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան/, Վարդանը /Սարգիս Մեհրաբյան/, Արմեն Գարոն /Գարեգին Փաստրմաճյան/, Տուրբախը /Հարություն Կիրակոսյան/ և ուրիշներ:

Կուսակցության մեջ հասունացած մի շարք խնդիրների լուծմանն էր նվիրված 1907թ. Վիեննայում հրավիրված ՀՀԴ 4-րդ ընդհանուր ժողովը: Դրա ընթացքում հաջողվում է հաղթահարել մի շարք վիճահարույց դրույթներ և հարթել տարաձայնությունները: Ընդունվում է ՀՀԴ նոր ծրագիր:

ՍՈՒՐԵՆ ՄԱՐԳՍՅԱՆ, *Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը*, էջ 110-129:

1895-1896 թթ. համիդյան կոտորածներից հետո արմենականների հիմնադիրներից Գրիգոր Պեռզիկյանը ջանքեր է գործադրում վերակազմավորելու կուսակցությունը: Արմենականների և վերակազմյալ հնչակյանների մի հատվածի գաղափարների միասնության շնորհիվ 1907թ. օգոստոսին հիմնվում է «Գաղափարակցական միությունը»: Նույն թվականին հրատարակվում են միության ծրագիրն ու կանոնադրությունը: Հնչակյան կուսակցությունում շարունակվող խմորումների հետևանքով առաջանում են երկու ուղղություններ: Առաջինը՝ չափավորները, որոնք 1907 թ. ապրիլից լույս տեսնող «Ազգ» թերթի անունով կոչում են «Ազգյան», իսկ երկրորդը՝ արմատական կամ «Արզվյանական»: Վերջինիս ամերիկյան մասնաճյուղը 1919 թ. իրեն հռչակեց Ազատական կուսակցություն: Այն 1921 թ. միացավ Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությանը՝ հիմնադրելով Ռամկավար ազատական կուսակցությունը:

1908 թ. սեպտեմբերի 15-ին Ալեքսանդրիայում վերակազմյալ հնչակյանների «Ազգյան» խմբավորումը և «Գաղափարակցական միությունը» միավորվելով հիմնում են Միացյալ հայ հեղափոխական կազմակերպությունը: Նույն թվականի հոկտեմբերի 26-ին Կահիրեում Մ. Տամատյանի և Վ. Մալեզյանի խմբավորումների միավորման հետևանքով առաջանում է Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը /ՀՍՌԿ/: Սակայն վերջինս չկարողացավ լայն ժողովրդականություն վայելել: Հեղինակի հաշվարկներով, Վան-Վասպուրականում, որը ռամկավարների գործունեության հիմնական վայր էր, կուսակցության անդամների թիվը 500-ից ավել էր /էջ 125/: Այս և այլ պատճառներով ՀՍՌԿ-ն 1921 թ. միավորվեց Ռամկավար ազատական կուսակցության հետ:

ՍԱՍՈՒՆ ՄԵԼԻՔՅԱՆ, *Սոցիալիստ-հեղափոխականները Հայաստանում և Անդրկովկասի հայաշատ քաղաքներում 1900-1914 թվականներին*, էջ 130-145:

Սոցիալիստ-հեղափոխականների /Էսէռների/ կուսակցությունը հիմնվել է 1902 թ.: Մեկ տարի անց նրա առաջին խմբակները սկսում են գործել Անդրկովկասում: Էսէռներն իրենց քարոզչությունն են իրականացրել գլխավորապես գյուղացիների և զինվորական միավորների շրջանում: 1903-1920 թթ. կուսակցությունը Անդրկովկասում հրատարակել է ռուսերեն, հայերեն, վրացերեն և թաթարերեն /ադրբեջաներեն/ 37 անուն թերթ /էջ 131/:

Բացի Բաքվից և Թիֆլիսից, սոցիալիստ-հեղափոխականների խմբակներ են գործել Կարսում, Ալեքսանդրապոլում, Երևանում, Շուշիում և այլուր:

Էսէռներն ակտիվ գործունեություն են ծավալում ռուսաստանյան առաջին հեղափոխության տարիներին: 1905 թ. փետրվարին երկրամասում գործող սոցիալիստ-հեղափոխականների կոմիտեները միավորվում են: Նրանք հիմնում են «Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության կովկասյան միությունը»: Վերջինիս մարտական ջոկատները մի շարք մահափորձեր են իրականցնում ցարական պաշտոնյաների դեմ: 1907 թ. հուլիսի 7-ին Ալեքսանդրապոլում էսէռներն ու դաշնակցականները համատեղ իրականացնում են հայատյաց գեներալ Ի. Ալիխանով-Ավարսկու ահաբեկումը: Երկու կուսակցությունների միջև կապը ապահովել են Երևանում ծնված և հետագայում արտասահմանում գործող ռուս նշանավոր էսէռ Յուրի Լունկևիչը, Հովսեփ Տեր-Դավթյանն ու Համազասպ Օհանջանյանը:

1907 թ. հունիսին Բաքվում հիմնվում է «Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության հայ կազմակերպությունը»: Նրա ստեղծման նախաձեռնողներն էին Լևոն Աթաբեկյանը /Ռիխարդ/ և Արսեն Ամիրյանը: Կարճ ժամանակ անց, էսէռների հայ կազմակերպության մասնաճյուղեր են հիմնվում Թիֆլիսում, Ելիզավետպոլում, Կարսում և այլուր: Հայ էսէռների թիվը հասնում էր մոտ 1200-ի /էջ 142/: 1908 թ. մարտից նրանք Բաքվում սկսում են հրատարակել «Անիվ» շաբաթաթերթը:

Չնայած այն հանգամանքին, որ էսէռները գործում էին խստագույն գաղտնապահության պայմաններում, այնուամենայնիվ, ցարական պահնորդներին հաջողվում է բացահայտել կուսակցության կազմակերպությունները և տպարանը: 1911թ. հունվարին ոստիկանության իրականացրած զանգվածային ձերբակալություններից հետո կուսակցության 900 անդամներից միայն 60-ը շարունակեցին գործունեությունը /էջ 144/: Էսէռների ազդեցությունը զգալիորեն աճում է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

ԴԵՐԵՆԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ, *ՌՍԴԲԿ կազմակերպությունները Հայաստանում և Անդրկովկասում*, էջ 146-176:

Անդրկովկասում սոցիալ-դեմոկրատական շարժումը տարածվում է 1890-ական թվականներից: 1901-1902 թթ. կազմակերպվում են Բաքվի, Թիֆլիսի և Բաթումի ՌՍԴԲԿ կոմիտեները: Հայաստանում առաջին մարքսիստական խմբակը հիմնվում է 1899 թ. Ջալալօղլիում /այժմ՝ Ստեփանավան/ Ստեփան Շահումյանի

ջանքերով: Մի քանի տարի անց՝ 1902 թ., կազմակերպվում է «Հայ սոցիալիստ-դեմոկրատների միությունը»: Նույն թվականի հոկտեմբերին միությունը հայերեն հրատարակում է «Հայ սոցիալ-դեմոկրատների մանիֆեստը»:

1903 թ. մարտի վերջերին Թիֆլիսում տեղի ունեցած Կովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջին համագումարում հիմնվում է ՌՍԴԲԿ Կովկասյան միությունը: Վերջինիս ջանքերով սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ են ստեղծվում Ալեքսանդրապոլի կայարանում և դեպոյում, Կարսում տեղակայված զորամասում, Նոր Բայազետում, Իգդիրում և այլուր:

Սոցիալ-դեմոկրատների քարոզչական գործունեության շնորհիվ 1903 թ. նոյեմբերի 5-ին տեղի է ունենում Հաղպատ գյուղի նշանավոր ընդվզումը: Գյուղացիական այդ ելույթը թեպետ ավարտվեց պարտությամբ, սակայն «պատմության մեջ մտավ որպես XX դարի սկզբի Հայաստանի գյուղացիական շարժումներում առաջին զինված ելույթը...» /էջ 153/: ՌՍԴԲԿ-ն հանդես եկավ 1903 թ. հունիսի 12-ի օրենքի դեմ: Բոլշևիկյան «Իսկրա» թերթում տպագրվում է հայ նշանավոր հեղափոխական Բոգդան Կնունյանցի «Նոր կողոպուտ» հոդվածը:

Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն առավել գործուն մասնակցում է ռուսաստանյան առաջին հեղափոխությանը: 1905թ. կուսակցությունը կազմակերպեց Ալավերդու հանքափորների առաջին գործադուլը: Հեղինակի բնորոշմամբ. «Ալավերդում բանվորական հոծ զանգվածի և սոցիալ-դեմոկրատական կազմակերպության առկայությամբ պայմանավորված էր նրանց առաջատար դերը Հայաստանի հեղափոխական շարժումների մեջ» /էջ 158/: Մայիսի 12-ին հիմնադրվում է ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպությունը: 1905թ. մայիսի սկզբներին Ստ. Շահումյանի ջանքերով միավորում են Հաղպատի, Ջալալօղլիի և այլ վայրերի սոցիալ-դեմոկրատական բջիջները: Դրանով հիմք է դրվում ՌՍԴԲԿ Բորչալուի /Լոռիի/ գավառական կոմիտեին:

Ռուսաստանյան առաջին հեղափոխության տարիներին արմատական հայացքներով աչքի ընկավ ՌՍԴԲԿ-ի մի թևը՝ մեծամասնականները կամ բոլշևիկները: Նրանց առաջնորդ Վ. Լենինը գտնում էր, որ հեղափոխության հեգեմոնը պետք է լինի բանվոր դասակարգը: Իսկ ՌՍԴԲԿ չափավոր թևի՝ փոքրամասնականների կամ մենշևիկների տեսակետները ներկայացնող Գ. Պլեխանովի համոզմամբ՝ բուրժուազիան: 1905թ. նոյեմբերին հրապարակված հոդվածում Բ. Կնունյանցը գրում էր, որ գերակայությունը պետք է տալ խորհուրդներին /սովետներին/: Նրա տեսակետն արժանանում է Վ. Լենինի քննադատությանը: Այս հարցին Բ. Կնունյանցը կրկին ադրադառնում է նաև 1911թ.: Ինչպես նշում է հեղինակը, «պատմական իրադարձությունների վերաիմաստավորման արդի ժամանակներն ապացուցեցին Բոգդան Կնունյանցի նման նշանավոր անհատականությունների իրատես և հեռատես լինելը»/էջ 176/:

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ, *Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպություն՝ «սպեցիֆիկներ»,* էջ 177-200:

XX դ. սկզբին, սոցիալիստական գաղափարախոսությունների ազդեցության ներքո ՀՀԴ-ից և ՌՍԴԲԿ-ից հեռացան մի խումբ երիտասարդներ: Նրանք 1903 թ. հիմնեցին Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը: Հիմնադիրների թվում էին՝ Բախշի Իշխանյանը, Ալ. Ծատուրյանը /Ռուբենի/, Երվանդ Պալյանը, իսկ ավելի ուշ՝ նրանց միացավ Դավիթ Տեր-Դանիելյանը /Անանուն/:

ՍԴԲՀԿ-ն իր գաղափարախոսությամբ և կազմակերպչական հատկանիշներով հիրավի սպեցիֆիկ /յուրահատուկ/ էր: Կազմակերպությունը, ի հակակշիռ սոցիալ-դեմկրատական մյուս կուսակցությունների, իր գաղափարախոսությունը կառուցում էր ավստրիական սոցիալիստների և Ռուսաստանի բունդականների նման: ՍԴԲՀԿ-ն գտնում էր, որ «Կովկասի յուրաքանչյուր ազգության բանվոր դասակարգ պիտի ունենա իր առանձին կազմակերպությունը, որը ֆեդերատիվ /դաշնային, սկզբունքով կմտնի ռուսական ընդհանուր սոցիալ-դեմոկրատական կուսակցության միջև» /էջ 181/: Նրանք միաժամանակ ընդգծում էին հայ իրականության առանձնահատկությունը: «Սպեցիֆիկները» ժխտում էին բոլշևիկների հռչակած «պրոլետարական ինտերնացիոնալիզմի» և ցենտրալիզմի սկզբունքը: Նրանք որոշակի նշանակություն էին տալիս ազգային գործոնին: Այդ էր պատճառը, որ կազմակերպությունն անմասն չմնաց 1905-1906թթ. հայ-թաթարական ընդհարումներից: ՍԴԲՀԿ Բաքվի կոմիտեն հանգանակությամբ ձեռք է բերում զենք և զինամթերք: Միաժամանակ, նրանք համերաշխության կոչեր էին հղում երկու ժողովուրդներին:

«Սպեցիֆիկները» մասնակցում են ռուսաստանյան առաջին հեղափոխությանը: 1908թ. գարնանը, սակայն, ոստիկանությունը ձերբակալում է կազմակերպության աչքի ընկնող անդամներին: ՍԴԲՀԿ-ն վերստին սկսեց գործել 1910-ական թվականներին և կազմակերպությունն աստիճանաբար վերաճեց կուսակցության:

Եթե իրենց քաղաքական գործունեության սկզբնական շրջանում «սպեցիֆիկները» դեմ էին արտահայտվում Հայաստանի անկախությանը, ապա 1918թ. պաշտպանեցին հայոց անկախ պետականության հռչակումը:

Ինչպես երևաց շարադրվածից, հայ կուսակցությունների պատմությունը գրված է տարբեր հեղինակների կողմից: Այդ հանգամանքը, և ոչ միայն այդ, հաճախ ի հայտ է բերում հեղինակների ինքնուրույն մոտեցումների կնիքը տարբեր բաժինների միջև, և դա միանգամայն հասկանալի է: Այս աշխատությունների ժողովածուն փաստորեն առաջին և հաջողված փորձն է՝ ստեղծել հայ ազգային կուսակցությունների միասնական պատմությունը, որի կարիքն զգացվում է և մասնագետների և ընթերցող լայն հասարակայնության շրջաններում:

Նշենք, որ ժողովածուն զերծ չէ թերություններից: Աշխատությունը չունի ներածություն: Բոլոր հեղինակները կուսակցություններն անվանում են քաղաքական /էջ 3, 27, 45, 110, 127, 130, 177, 155, 200/, որը մեր կարծիքով, ճիշտ չէ: Ցանկալի կլիներ, որպեսզի ժողովածուի վերջում ռուսերենով և անգլերենով լինեին հակիրճ ամփոփումներ:

Պատմական բարդ ու ծայրահեղ ծանր իրադրության մեջ, մեծ տերությունների հարափոփոխ, խոստումնադրուժ քաղաքականության պայմաններում գործող ընդհատակյա կուսակցությունները, անշուշտ, չէին կարող խուսափել սխալներից: Հեղինակները դրանցից ոչ մեկին չեն անդրադառնում: Չկասկածելով կուսակցությունների ղեկավարների և շարքայինների ազնվությանն ու ինքնազոհությանը, պետք է ասել, որ նրանք թույլ էին տալիս նաև սխալներ, որոնք ավելորդ արյունահեղության պատճառ էին դառնում. օրինակ՝ հնչակյանների կազմակերպած Գում գաբուի ցույցը, դաշնակցականների կազմակերպած Բանկ Օտոմանի գրավումը:

Վերը նշվածը, սակայն, չի նսեմացնում հայ պատմաբանների կատարած այս աշխատանքի նշանակությունը: Գրախոսվող ժողովածուն մեծ հետաքրքրություն կառաջացնի պատմաբանների, ընթերցողների և մեր օրերում գործող կուսակցությունների շրջանում:

ՍԱՀԱԿՅԱՆ Ռ. Օ.
Պատմական գիտությունների թեկնածու